## ԱԶԳ

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ*

Հոգաբարձութիւն Ներսիսեան ազգային Հոգեւոր դպրոցի յայտարարում է ի գիտութիւն որոց կը վերաբերի, Բարձրաստիճան Ստեփան Ղամբարեանցի ամուսին հանգուցեալ Նունէ Ղամբարեանցի հետեւեալ նուիրատուութեան եւ նորա պայմանների մասին, որոնք արած են 28 օգոստոսի 1891 ամի։

"Ցանկանալով յորդորել Թիֆլիզի Ներսիսեան հոգեւոր դպրանոցի եւ Ս. Էջմիածնի հոգեւոր ճեմարանի սաներին աւարտելուց յետոյ շարունակելու գործել գրականական ասպարիզում եւ միեւնոյն ժամանակ վարձատրել նրանց գրական գիտնական առաջին աշխատութիւնները Կովկասի եւ Փոքր Ասիայի ազգութիւնների պատմութեան, գրականութեան եւ ազգագրութեան ուսումնասիրութեան վերաբերեալ, յարգելի Հոգաբարձութիւնից խնդրում եմ ընդունել յօգուտ Ներսիսեան հոգեւոր դպրանոցի նուէր ինձնից երեք հազար ռուբլի 4% արժեթղթերով եւ գործադրել հետեւեալ կերպով. 1. իմ նուէրը պիտի լինի անձեռնմխելի մայր գումար. այդ գումարից գոյանալիք %%-ից, որ չորս տարուց կը հասնի մօտ հինգ հարիւր ռուբլի, ամէն չորս տարին մի անգամ պիտի տրուի երկու մրցանակ՝ առաջինը մօտ չորս հարիւր ռուբլի եւ երկրորդը հարիւր ռուբլի, որպէս վարձատրութիւն ամենաընտիր աշխատութիւնների գրուած հայկական լեզուով Կովկասի եւ Փոքր Ասիայի ազգութիւնների պատմութեան, գրականութեան եւ ազգագրութեան մասին։ 2. Մրցանակաբաշխութեան մասնակցելու թոյլատրում է Ներսիսեան հոգեւոր դպրանոցի եւ Ս. Էջմիածնի հոգեւոր ճեմարանի այն բոլոր աւարտած սաներին, որոնք իրանց ուսումն աւարտել են մրցանակաբաշխութեան օրից ոչ աւելի առաջ քան հինգ տարի։ 3. Մրցանակները տրւում են առանձին անախմբից բաղկացած հինգ հոգուց, որոնց ընտրում է Ներսիսեան հոգեւոր դպրանոցի ուսուցչական ընդհանուր ժողովը իր միջից եւ մասնաւոր անձերից։ Որպէս ցանկութիւն, յայտնում եմ կարծիքս, որ գոնէ երկու անդամները միշտ ընտրուին մասնաւոր հեղինակաւոր անձերից"։

* Յաւելուած "Մշակ„ ի Nr. 51, 1895.

Յիշեալ պայմանների հիման վրայ առաջին մրցանակաբաշխութիւնը հանգուցեալ Ղամբարեանցի լինելու է տարոյս վերջի ամիսներին հետեւեալ կերպիւ։

1. Հեղինակութիւնները պէտք է ուղարկուին Ներսիսեան դպրոցի Հոգաբարձութեանը, ոչ ուշ քան 1-ն սեպտեմբերի։

2. Հեղինակութիւնները պէտք է ունենան խորագիր, իսկ հեղինակի անունը պէտք է նշանակած լինի փակ ծրարի մէջ, նոյն խորագրի տակ, որպէս զի ծրարը բացուելու է միայն մրցանակաբաշխութեան որոշումից յետոյ։

3. Մրցանակատուութեան հարցը որոշելուց յետոյ, հեղինակութիւնները կարելի է յետ ստանալ կամ անձամբ, կամ հաւատարմաթղթով։

4. Մրցանակի արժանացած շարադրութիւնների, նոցա հեղինակների եւ տարած պրեմիայի քանակութեան մասին կը հրատարակուի լրագիրներում։

5. Առաջին պրեմիայի քանակութիւնը հաւասար է $^4/_5$-ականի մայր գումարի, առ 1-ն առաջիկայ սեպտեմբերի գոյացած տոկոսիքի, իսկ երկրորդ պրեմիան $^1/_5$-ականի նոյն տոկոսիքի։ Բաշխելու գումարի քանակութիւնը կը լինի ընդ ամէնն փոքր աւելի քան չորս հարիւր ռուբլի։

Հերթական հոգաբարձու

Բ. Մելիք-Կարագէօզեան

Քարտուղար Հոգաբարձութեան

Ռ. Մելիք-Ադամեանց։

## ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ

### ԴՐԱՆՍԻԼՎԱՆԻՈՅ ՀԱՅՈՑ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ

Այժմեայ տեղական տեղեկութիւններ։

Օրինակ առնելու միաբանութիւն ու համակամութիւն կը տիրէ Կերլայ հայաքաղաքին եկեղեցական վարչութեան ու աշխարհական իշխանութեան մէջ։ Այսպէս էր այս բանս ի սկզբանէ հետէ։ Այս միաբանութիւնն ու համակամութիւնն է գլխաւոր պատճառներէն մէկն, որ քաղաքն՝ իր հիմնարկութենէն անմիջապէս ետքը՝ մեծապէս ծաղկելու սկսաւ։ — Եկեղեցական մըն էր — Վերզարեան եպիսկոպոս — որ քաղքին հիմը դրաւ. եկեղեցական մըն էր

digitised by A.R.A.R.@